8. Մասուրի ապուր ուտացնել:

9. Զուի դեղնուցը հարել թէյի հետ կամ տաք ջրի, խմացնել:

10. Շնաբիբեթաի ծաղիկը եփել, ալիւր չաղ տալ վրան, դնել որկորին:

11. Վերցնել կէս մսխալ զաֆրան, երեք ֆինջան ջրի մէջ եփել, ինչպէս չայ չաքարով կամ մեղրով անօթի կամ երեկոյեան խմել:

12. Ըխալհազի (կոկլիւղի դէմ) սահլամ բոյսի (արմատը սպիտակ սոխի պէս) կաթի մէջ եփում են խմացնում:

Է. Փորացաւի համար:

1. Օղի կամ կոնեակ, ոմ խմացնել:

2. Թրծած աղիւսը տաքացնել ջրի մէջ փաթաթած դնել փորի վրայ:

3. Գօտի կապել մի փայտի անցնել գօտու մէջ, ոլորի այնքան որ փորը սեղմուի եւ այդ դրութեամբ մի քանի բոպէ պահել:

4. Գինու մէջ ծեծած սեւ պղպեղ խառնել եւ տաքացրած խմեցնել:

5. Մէջքին ցուրտ ջուր ածել:

6. Լկերթնը խաշել, քամել, ջուրը խմացնել երեխաների փորացաւի ժամանակ:

7. Փորացաւի դէմ փչատի կճեպը եփել չայի պէս, մեղրով կամ չաքարով ինչքան կարենայ խմել. տաք լինի թէ ցուրտ վնաս չունի:

8. Փորի քամու դէմ չամանը եփել գինու մէջ, խմել:

Ը. Թարախակալ ուռեցի կամ չուբանի դէմ:

1. Գազաիկուր բոյսը վերցնել, թքնել վրան եւ դնել ուռեցքին, նա թարախը դուրս է բերում:

2. Ոչխարի ոսկրի միջի ծուծը (իլիկը) ծեծել դնել վրան:

3. Ալիւրը խմոր անել, վրան չաքարի փոշի ցանել դնել ուռեցքի վրայ:

4. Խորոված սոխ դնել, կամ սոխը մանր կարատել ընտիր սապոնի հետ խառնած ամանի մէջ կրակի վրայ այնքան տրորել, որ միանան, յետոյ դնել ուռեցքի վրայ:

5. Օրտուրաղի չիրը պատռել, միջից կիսել դնել վրան:

6. Կտաւատի խմորը դնել:

7. Խինդեզնի տակոին թակել, ջրովը շփոթ անել դնել ուռած տեղի վրայ քանի որ թարախահալած չէ:

8. Ուռեցքը նստեցնելու համար ցորենը ծամում են լորձունքի հետ խառն քսում:

9. Զեռը ուռչելուց, բողկի ջուրը, կզբուձուն զէյթունի իւղով խառնիր, քսիր:

## ԿԱՐՆԵՑԻ ՍԵՐՈՎԲԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

### ԳՐԻՄԵՑԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

*(Շարունակութիւն եւ վերջ:)*

6.

Զերդ Սրբազանութիւն:

Ողորմած Տէր:

Կառավարիչն մինիստրութեան հոգեւորական գործոց այլասեռ դաւանութեանց ի 2էն Ապրիլի յայտնեաց ինձ զբարձրագոյն կամս նորին կայսերական մեծութեանն յաղագս փոխադրութեան Ներսէս արքեպիսկոպոսին ի վիճակն Բեսարաբիոյ եւ ընտրելոյ ձերդ սրբազնասրբութեան զկանգիդատս վասն վիճակացն Վրաստանի եւ Ատրպատականայ խմովս համաձայնութեամբ: Ընդ նմին ի միասին առաքեաց զպահարանս վասն հաստատելոյ զայն առ սրբազնասրբութիւն ձեր:

Պատիւ ունելով առաքել ընդ այսմ զնշանակեալ պահարանն ընդ 652 համարովք, ամենախոնարհարար խնդրեմ՝ ձերդ սրբազնասրբութիւն, մի՛ զանց առնել ծանուցանել ինձ զկանգիդատացն, զորս ընտրել ունիջիք վասն կառավարելոյ զվիճակն Վրաստանի եւ Ատրպատականայ:

Մատուցանել ձերում սրբազնասրբութեան զայս թուղթ, յանձնեցի ես բարձրարժանապատիւ Սերովբէ վարդապետին, որ ըստ իւրումն առաքինութեան, եւ ջերմեռանդութեան առ նորին կայսերական Մեծութիւնն՝ ապացուցանելոյ բազում վորձիւ, եւ ըստ այլոց բարոյական հանգամանաց՝ յայտնի է ինձ որպէս մարդ արժանաւոր: Տալով զպարտու պատշաճն ճշմարտութիւն նորին բարեպաշտութեան, թէ վաստակօք եւ թէ զովանի բնաւորութեամբ՝ համարիմ թէ ըստ ամենայն ճշմարտութեան Սերովբէ վարդապետն արժանի է ձեռնադրել եպիսկոպոս,



եւ խառնել ի թիւ կանդիդատացն. զոր եւ յանձն առնեմ ի յատուկ բարեյարգութիւն եւ խնամակալութիւն ձեր, առ այն մանաւանդ, զի սրբազնասրբութիւն ձեր նախ քան զայս եւս աշխատ եղէք ի դառանել զհովուապետս հմտաւոր եւ արժանաւորս:

Եւ այլով՝ յուսամ ես, թէ ընտրութիւն կանդիդատաց վասն նշանակեալ վիճակացն Վրաստանի եւ Ատրպատականայ յառաջասցի թելադրութեամբ հոգւոյն սրբոյ եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ձեզ հովանաւորողի:

Առաւելեալ վերապատուութեամբ եւ անձն ընծայութեամբ ունիմ պատիւ մնալ

ձերում սրբազնասրբութեան
ողորմած հովուապետ
ամենախոնարհ ծառայ

Գրաֆ Երեւանայ Իվան Պասկեւիչ:

Թ. 1851:

Թիֆլիս, 1830, Մայիսի 1:

—

7.

Բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ

Իմ մտերիմ եղբայր:

Առաքեցի զԳարաճով ասորիճանաւորն իմ, որ է վաղածանօթ Ձեզ, եւ զմիւս ոմն, ի գնել մնաց: Տառապանք ժողովրդեանս մեծ է, եւ ես ջանամ փրկել զնոսա ի սովէ:

Խորհուրդ եառ Հոգեւոր ծնողի իմոյ հրամայել զի Աթոռայինք օգնական գոցին գործոց դոցա. զնոյն եւ ի Ձէնջ խնդրեմ առնել: Փութով ընդ Գարաճովին զրեցէք զՁէնջ:

Մնամ Ձեզ մտերիմ եղբայր
Սերովբէ վարդապետ:

Ախլցխայ, 1830, Սեպտեմբեր 12:

Առ բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ:

Առենադպիրն Դրիմցի:

Ի Սուրբ Աթոռն:

—

8.

Բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ

Իմ մտերիմ եղբայր:

Ընկալայ զվերջին գիր ձեր զոր յանձեալ էիք ընկերի ազնուական Կալաճովի բերել ինձ: Շնորհակալ եմ վասն տեղեկութեանց զոր տայք ինձ: Միայն ցաւիմ զի Նորին Վեհափառ Սրբութիւնն փոքր ինչ զեղեալ է ի վիճակէ քաջառողջութեան, յուսամ թէ ցարդ վերստին զօրացեալ իցէ: Հոգւով չափ ըղձալի ինձ զալ ի Սուրբ Աթոռդ, բայց զրաղմունք իմ դեռ ասա ծովացեալ ընկղմեն զիս. ի ժամանակն ձմեռայնոյ այսուհետեւ ոչ գիտեմ թէ զիարդ կարացից ի ճանապարհ հանել զէպ առ Ձեզ. ճանապարհն յԱխլքելէկայ ցկիւմրի վատթար է քան զկովկասեանն եւ զԲէզապտալեանն, զի չի՛ք յերկար խարոցի անդ՝ ուրեք բնակութիւն ի մնալ զիչերայն եւն: Յուսամ Նորին Վեհափառ Սրբութիւնն խնայեսցէ ի կեանս իմ:

Մնդրանօք իմովք եհաս ասա քաղաքական Կուբեռնատորն ի 16 ամս. եւ զպայթ եւ զպերեկ մաշեմք ի կառավարել եւ ի պահպանել զզաղթականս մեր, որք զրեթէ՛ ի հասանել իմ յուսակտուր լեալ՝ կոտորէին եւ ցրուէին առ յոսի կառավարութեան տեղւոյս: Այժմ փրկութիւն եղեւ սոցա. եւ դեռեւս բարւոք կարգաւորութեամբ մերով հանգարտեսցին եւ ծաղկեսցին:

Դարձեալ փութով խնդրեմ գրել առ իս զկարգաւորաց եւ եմ

Եղբայր Ձեր
Սերովբէ Արքեպիսկոպոս
Ատրպատականայ:

Ախլցխայ, 1830, Հոկտեմբեր 19:

Համար 34:

Ի Հոկտեմբեր 22 ստացայ:

—

9.

Բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ

Իմ մտերիմ եղբայր:

Դարձ արարեալ յԱխլցխայէ ի Տփխիս ի 20 ամս. ընկալայ զթուղթ ձեր հանդերձ այլ թղթովք հնագոյն ժամանակաց:

Թերեւս զթուղթն զորս գրեալ առ իս առաքեալ էք յԱխլցխայ՝ ասա ընկալայց ոչ անազան: Գերապատիւ Յովհաննէս Սրբազան Հայր իմ ծանոյց ինձ զամենայն նորանոր եղեալս առ ձեզ. այժմ ի գալ գրաֆին Երեւանու աշխատ եղիցուք ի միասին յառաջ ածեալ զամենայն եթէ յաջողեսցէ Տէր:

Ուրախ եմ եւ փառաւորեմ զԱստուած,

© National Library of Armenia

զի օրհնեաց զօգտակար տնօրինութիւնս մեր ի մասին բարեգործութիւնից Սրբոյ Աթոռոյ։ Ծնողի մերոյ։ Նորին Պայծառափայլութիւնն մեծաւ խնդամտութեամբ լուցեալ զամենայն։ Խնդրեմ յատկապէս ողջունել եւ շնորհաւորել զԳրիգոր Սրբազան Արքեպիսկոպոսն եւ զՂուկաս բարձրարժանապատիւ վարդապետ՝ հարազատ եղբարս իմ։

Ի մասին ձեր ուրախ եմ զի մնացիք այդր։ Յովհաննէս բարձր Սրբազան Հայրն եւ ես հոգ կալցուք, զի գուք փառաւորեսջիք եւ միխիթարեսջիք։

Անուն ձեր փութով գրեալ արձանեսցի ի մատենին սիրելի վարդապետաց Նորին Պայծառափայլութեանն։ Ըստ որոյ քաջալերեցարո՛ւք, եւ թո՛ղէք ինձ գհօտ ձեր։

Ի մասին իմ անձին ունիք գիտել ի Թղթոյ Նորին Վեհափառ Սրբութեան, եւ Սրբազան Հարց բարեկարգ խորհրդարանի մերոյ։

Խնդրեմ ըստ այնմ փութացուցանել զկոնդակ իմ հանդերձ հարկաւոր պատշաճեալ թղթովք, երաշխաւոր լեալ վասն իմ, զի յօժարապատրաստ եմ ճանաչել զաշխատութիւնս ծաղկարար եւ գրագիր եղբարցդ։ ամին իբի խնդրեմ գրել առ իս վաղվաղակի եղբայրական համարձակութեամբ, թէ որոց եւ զի՞նչ պատշաճ իցէ ընծայել։

Խնդրեմ դարձեալ առ իս գրել զամենայն հանգամանս ձեր. եւ ես այսուհետեւ ճոխագոյնս գրեցից։ Համբուրելով սուրբ սիրով զձեզ եմ

Եղբայր ձեր Սերովբէ Արքեպիսկոպոս։

Թիֆլիս, 1830, Նոյեմբեր 29։

Համար 45։

Առ բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ։

Առենադպիր Ղրիմցի անդամ բարեկարգ խորհրդարանի։

Թ. 35։ Սրբոյ Աթոռոյ։
Ի սուրն Էջմիածին։

Ի 26 Դեկտեմբեր 1830 ստացեալ։

Его Высоко преподобіи Армянскому Архимандриту Іоаннесу

Въ Эчміадзинъ.

—

10.

Բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ

Իմ մտերիմ եղբայր։

Ի 29 ամսեան անցելոյ գրեցի առ ձեզ, այժմ կրկին գրել խնդրեմ փութով առաքել աստ զկոնդակ եւ զայլ հարկաւոր նամակս վիճակի իմոյ։

Պայծառափայլ Գրաֆն դարձաւ աստէն ի 4 ամսոյս։ Ի 5 Բ. Գ. Սրբազան Հայրն մեր Յովհաննէս Արքեպիսկոպոսն եւ ես պատիւ կալայ տեսանել զնա յառանձինն. թէ զի՞նչ արժանաւոր գիտելեայ ձերոց՝ փութով ծանուցուք։ Առ այժմ՝ միայն զայս գիտասջի՛ք, զի մեծաւ պատուով եւ սիրով ընկալաւ զհայր մեր, եւ եցոյց յօժարութիւն պաշտպանելոյ զամենայն օգտակար առաջարկութիւնս խորհելս ի ձէնջ եւն։

Կարապետ Սրբազան Արքեպիսկոպոսն Ախլցխայու ընկալաւ յինքնակալէ մերմէ խնդրանօք Կոմսին Երեւանու՝ զնչան Սրբոյն Աննայի առաջին կարգի։ Ըստ որոյ արժան է հնորհաւորել զնա։

Մի ճանձրանայք գրել առ իս փութով զկարեւորաց, որպէս եւ ես ոչ դանդաղեմ հոգալ զօգտակարաց, եւ յիշեմ միշտ զձեզ։

Ողջո՛յն գուք ամենայն հարց եւ եղբարց, եւ մանաւանդ լուսարար Սրբազանին, Փիլիպպոս Պապուն, Գրիգոր Սրբազանին, եւ Ղուկաս վարդապետ սիրելի եղբօրն։

Ողջագուրելով զձեզ՝ եմ

Մտերիմ եղբայր Ձեր
Սերովբէ Արքեպիսկոպոս։

Թիֆլիս, 1830, Դեկտեմբեր 6։

Համար 47։

Его Высоко преподобіи
Отцу Архимандринту
Юанесу
№ 47. Хримскому
Въ Эчміадзинъ

Առ բարձրապատիւ Յովհաննէս վարդապետն Ղրիմցի Առենադպիր եւն։

Ի Սուրբ Աթոռն։

Армянскаго Архіепископа Серафима.

Ի 12 Դեկտեմբեր ստացեալ 1830։

—



11.

Բարձրապատիւ եղբայր իմ մտերիմ։

Ահա կատարեցի զկամս ձեր եւ իմ միանգամայն։ Նախ քան զհեռանալ իմ պարտ անձին վարկայ դիմել ի սուրբ Աթոռդ, եւ փութամ գրկափարել զքեզ, զՂուկաս վարդապետ մտերիմ եղբայրն իմ եւ զամենայն սիրավառ միարանս, յորոց խնդրեմ յատկացուցանել զՀարս մեր զՏեղապահ Սրբազան Արքեպիսկոպոսն, զլուսարար Ստեփաննոս եւ զՓիլիպպոս Արքեպիսկոպոսն։

Սերովբէ վարդապետ։

Բարսեղ Սրբազան Արքեպիսկոպոսն լիագոյն կամեցաւ առ ձեզ գրել զայս երկու ծրարս Թղթոց բերեալս ի Թիֆլիսու առաքել այսօր ապահով։

Բերդ Երեւան, 1831, Փետրուար 9։

—

12.

Բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ

Իմ մտերիմ եղբայր։

Հասի յաջողակ ճանապարհորդութեամբ ի Տփխիս ի 2 ամսոյս։ Յովհաննէս բարձր Սրբազան Հայրն այսօր ունի մնալ ի Բղէթ։ Յուսամ զի չորեքինգ օր աւուր յաւէտ եւս կապիք կատարեալ սիրով եղբայրութեան, եւ զիս մխիթար առնէք։ Ըստ այմ չունելով բնաւ ժամանակ իւրաքանչիւրոց ի ձէնջ ոչ եղէ կարող գրել առանձինն. բայց գրկախառնել յուշածեմ զամենեսեանդ։

Ողջոյն տուք որդիական մտերմութեամբ Տեղապահ բարձր Սրբազան Հօրն, Ստեփաննոս Սրբազան եղբարց, եւ Գրիգոր Հայր սուրբ յատկացեալ եղբօրս։

Անպակաս արարէք զգիր ձեր եւ առաքեսջիք։ աստ։

Ամենախոնարհ ծառայ եւ եղբայր
Ձեր Սերովբէ վարդապետ։

Թիֆլիս, 1831, Ապրիլի 10։

Համար 24։

Շնորհաւորեմ ձեզ եւ ամենայն Հարց մերոց զսուրբ Յարութիւն Տեառն մերոյ։

—

13.

Բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ

Իմ մտերիմ եղբայր։

Ընկալայ զգիր ձեր վերջին, որում սպասէի։ Ի Թղթոյ իմոյ զոր առ Նորին Վեհափառ Սրբութիւնն ունիք տեղեկանալ զի յօրէ դառնալոյ իմ յայս քաղաք չեմ լեալ ի հանգստի եւ անձեռնհաս դտի ի գրել ի Սուրբ Աթոռդ։

Զկնի այնչափ աշխատութեան կրելոյ յեղանակի ճմեռայնոյ եւ ծախս մեծամեծս առնելոյ, ի շինութիւն եւ ի բարեւաւութիւն ազգի եւ Աթոռոյ, վարձք իմ եղեն ի դառնալ իմում, լսել զրպարտութիւնս չարաչարս եւ անկնունելիս. իբրեւ թէ ժողովն Արարատայ՝ որ ի 15 Մարտի, վասն ընտրութեան կանոնաւթաց ի կաթողիկոսութիւն, եւ Սրբազան Հայրապետն, բռնադատեալ՝ յակամայս, եւ զարտասուս յաչս, արտարերեալ լցեն զընտրութիւն իւրեանց վասն Յովհաննու Սրբազան Հօրն մերոյ։ Տակաւին չարակամք չեն հանդարտեալ եւ ընդունայն մեքենայս հնարեն ի խախտել զամրացուցեալն յամենայն հոգեւորականաց այնր մեծի ժողովոյ եւ զհաստատեալն յամենայն ականաւորաց ազգի մերոյ։

Գնալն Կոմսին Երեւանայ առ թագաւորն ոչինչ փոփոխութիւն առնէ վիճակի զատառաց մերոցն Ենեբալ Բանքրատիոնն՝ տեղապահ նրա արասցէ զամենայն ըստ հրամանի նորա. եւ յուսալ արժան է զի նա փութով յետս դարձցի, եթէ օգնականութեամբ Բարձրելոյն ապստամբութիւն Լեհաց դադարեսցի։

Սրբազան Բարսեղ Արքեպիսկոպոսին, Յովսէփ վարդապետ եւ Ղուկաս վարդապետ մտերիմ եղբարցս ողջոյն մատուցէք գրկափար սիրով։ Այսուհետեւ ջան եղիցի առանձինն առ նոսա գրել։ Խնդրեմ զնալ համբուրել յիմ դիմաց զաստուածարեալ աջ Տեղապահ բարձր Սրբազան Հօրն, Ստեփաննոս արքեպիսկոպոսաց, լուսարարին եւ Տեղապահանին։ Երկայնամիտ եղերուք եղբարք, զի ես տքնեմ վասն ձեր ըստ արժանւոյն, եթէ զօրացայց ի Տեառնէ։ Համբուրելով զքեզ եմ՝

Ամենախոնարհ եղբայր
քո Սերովբէ Արքեպիսկոպոս։

Թիֆլիս, 1831, Մայիս 9։ Համար 43։

—



© National Library of Armenia

14·

*Մեծապատիւ Յովհաննէս վարդապետ*

*Իմ մտերիմ եղբայր:*

*Ընկալայ զծրար թղթոց Հոգեւոր ատենի Աստրախանայ զոր հանդերձ թղթով ձերով առաքեալ էր ձեր առ իս:*

*Այսօր գիտակ եղէ զի բարձր Սրբազանն Վրաստանի յուղի արկեալ է ի 27 ամսեան անցելոյ: Ընդհանրականք Նորին Վ. Սրբութեան հասեալ են առ Բաղդասար Արհին եւ առ Սիմէոնն Ղարապաղու:*

*Բարսեղ Սրբազան Արքեպիսկոպոս եղբայրն գրեալ էր յերեկեան աւուր առ իս վասն երիվարին պատկանելոյ Սրբոյ Աթոռոյ եւն: Քանզի այրն որ վաճառեալ է զայն՝ մեռեալ է, վէճն երկարաձգի, բայց յամենայն ատենական վէճս ձեր պարտիք ունել զվաստարան զոք, որ զհետ եղիցի հանել զվճիռն:*

*Յերկրորդում չարաթու աղուհացից յուսամ դիմել առ ձեզ, բայց ցայն վայր՝ խնդրեմ միշտ տալ ինձ տեղեկութիւն ամենայն հարկաւոր գիտելեաց, եւ մանաւանդ գիտակ զիս առնել թէ զի՛նչ հանրաւ այսօր ընկալայք ի Տփխեաց եւն:*

*Գրկելով զձեզ եմ ցմահ*

*Եղբայր ձեր Սերովբէ Արքեպիսկոպոս:*

*Երեւան, Ուրբաթ օր*:*

*Ահա այս շրջանում է սկսւում Սերովբէի գրագրութիւնը Ղրիմեցի Յովհաննէս վարդապետի հետ, որ տեւում է մի տարի (1830 թ· Յուլիս 6ից մինչեւ 1831 թ· Մայիսի 9ը)· Սերովբէն եւ իշխան Բէհբուդեանը էջմիածնում եղած ժամանակ, համաձայն Պասկեւիչի հրահանգի, խոստումներով եւ սպառնալիքներով ստիպեցին միաբանութեան անդամներից շատերին, նոյն իսկ Ներսէսի կատաղի կողմնակիցներին, ինչպէս էր Յովսէփի վարդապետը, անցնել Կարբեցու կողմը: Դրանց թւումն էր եւ Ղրիմեցի Յովհաննէս վարդապետը, որ Սինոդի անդամ եւ ատենադպիր էր եւ մեծ դիրք ունէր էջմիածնում, որտեղ նա յայտնի էր եւ որպէս գիտնական անձնաւորութիւն: Այստեղ հրատարակւում են մեր ձեռքի տակ եղած Սերովբէի նամակներն ահա այդ Յովհաննէս վարդապետ Ղրիմեցուն, որոնք լիքն են ակնարկներով այն խոստումների մասին, որ Սերովբէն արել էր նրան:*

*Շուտով տեղի ունեցան եւ կաթողիկոսական ընտրութիւնները որպէս հետեւանք Եփրեմի կամաւոր հրաժարման կաթողիկոսական գահից եւ Սերովբէն Պասկեւիչի կողմից նշանակուեց, որ «գաղտնի կերպով համաձայնեցնէ պատրիարքի եւ միւս եպիսկոպոսների կարծիքները տէրութեան նպատակների հետ»: Եւ Յովհաննէս Կարբեցու ընտրութեան, այս տրագիկոմեդիայի, տխուր հերոսները հանդիսացան Սերովբէն եւ իշխան Բէհբուդով: Սակայն պէտք է նկատել, որ վերջինս Երեւան գնալիս Սերովբէին մենակ չէր թողնում էջմիածնում, վախենալով, որ մի՛ գուցէ իր բացակայութեան ժամանակ անզուսպ արքեպիսկոպոսը ընտրութիւնների ընթացքը Կարբեցուց լուռ տայ դէպի իր կողմը···: «Ընտրութիւնները» վերջացան· Կարբեցին հաստատուեց կաթողիկոս, իսկ Սերովբէն ստացաւ Սուրբ Աննայի առաջին աստիճանի շքանշան···:*

*Բացի վերոյիշեալ յատկութիւններից Սերովբէն յայտնի էր իր քինախնդրութեամբ: Յայտնի չէ, թէ ինչո՞ւ նա վերոյիշեալ նամակագրութիւնից յետոյ կարիք համարեց դէն հրել իրենից Յովհաննէս վարդապետ Ղրիմեցուն· բայց նա դրանով չը բաւականացաւ եւ նա ոչ միայն Ղրիմեցու, այլ եւ Յովհաննէս Կարբեցու վկայութեամբ դարձաւ այն հալածանքների դրդապատճառը, որ յարուցեց Ղրիմեցու դէմ Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսը: Նա յայտնի էր նոյնպէս սնամէջ պարծենկոտութեամբ, անվայել վարքով, կաշառակերութեամբ եւ, որտեղ հնարաւոր էր, նաեւ ինքնիշխան բռնակալութեամբ: Նրա նամակները Յովհաննէս վարդապետ Ղրիմեցուն վխտում են անմիտ պոռոտախօսութեամբ, որով նա այն տպաւորութիւնն է թողնում, կարծես թէ ամբողջ ազգի բախտը տնօրինողն ինքն է: Սերովբէն չէր ճանաչում Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսի եւ Սինոդի իշխանութիւնը իր թեմական գործերում, որ նա կառավարում էր մեծ զեղծումներով, այնպէս որ Ներսէսը կաթողիկոս դառնալով պատրաստւում էր հաշիւներ պահանջել նրանից, բայց մահը փրկեց Սերովբէին՝ հաշուետուութիւնից:*

* *Հաւանական է, որ սոյն նամակը Սերովբէ արքեպիսկոպոսի նամակների շարքում երկրորդը լինի, բայց թուական չունենալու պատճառով զետեղում ենք վերջում:*



*Ընդհանուր դիտողութիւն· — Սերովբէն սիրում է ստորագրել «Սերովբէ վարդապետ», բայց մէջ ընդ մէջ նաեւ «եպիսկոպոս» եւ «արքեպիսկոպոս»· պէտք է ի նկատի ունենալ, որ Յ· Ղրիմեցուն առաջին նամակը գրելիս նա արդէն Եպիսկոպոս էր:*

*Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*

## ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵՎՆՑ

### ՄԵԾ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԸ

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի առթիւ:

*(Շարունակութիւն:)*

Բ.

Բաքու, քարիւղի աղբիւրների կենդրոնատեղին, գտնւում է Ապշէրոնեան թերակղզու ծայրը, Կասպից ծովի եզերքին: Ռուսական հող է դարձած վերջնականապէս՝ միայն 1806ին· վերջնականապէս եմ ասում, որովհետեւ մինչեւ այդ թուականը ռուսները մի քանի անգամ գրաւել ու ետ են տուել պարսիկներին:

Բաքուն[1] եւ իր շրջակայքը շատ վաղուց հանրածանօթ էին, շնորհիւ այնտեղ, գետնից հոսող բնական գազին (gaz): Այս գազն էր, որ «յաւիտենական հուր» էր կոչուած, որովհետեւ անվերջ բղխում էր եւ վառւում գետնի երեսին: Բաւական էր հողը փոքր ինչ ձեռքով փորել եւ լուցկի վառել· անմիջապէս գազը բռնկում էր, ինչպէս ես ինքս փորձել եմ, 1899ին, երբ առաջին անգամ Բաքու եմ գնացել: Բաքուի մօտ այժմ Սուրախանի (հաւանականաբար –խանէ պարսկ· վերջաւորութեամբ) կոչուած գեղն էր, այդ «յաւիտենական հուրի» կենդրոնն, որովհետեւ նա պարսից տիրապետութեան ժամանակ «Աթէշգեահ» (آتش گاه) = կրակատեղի՝ անունն էր կրում: Եւ իրօք այստեղ էր գտնւում այն մեծ կրակատունն, ուր զրադաշտականներն իրենց պաշտամունքն էին կատարում, եւ ուր դալիս էին այդ նպատակի համար նոյն իսկ Հնդկաստանից այնտեղ տեղափոխուած փարսիները (կրակապաշտ պարսիկներ): Այս կրակատունն, որ ես այցելել եմ, 4 սիւնաձեւ աշտարակներ ունի, որոնց վերին ծայրերից անվերջ հոսում էր գետնաբուղխ բնական լուսաւոր գազն եւ տարածւում օդի մէջ: Նախկին կրակատունը 1868ից սկսած նաւթային գոտարանի պատերի մէջ էր առնուած թէեւ այդ գործարանն ինքն էլ անգործութեան է մատնուած հիմայ: Վերջին անգամ այնտեղ կրակի պաշտամունք է կատարուել 1888ին երբ ռուսաց Աղեքսանդր Գ· կայսրը Բաքու է եկել եւ նրան հաճոյք պատճառելու համար յատկապէս Հնդկաստանից կրակապաշտ մոգեր են բերել տուել:

Նաւթային արդիւնաբերութիւնը Բաքուի շրջանում, թէեւ տասնեակ տարիներ յառաջ ծանօթ, բայց իսկապէս 1880 թուականից է սկսած ծաղկել: Ես այստեղ մտադիր չեմ մասնագիտական տեղեկութիւններ տալ նաւթի (нефть, naphte, կամ pétrole brut) ծագման կամ բնական յատկութիւնների, զտման եւ նրանից ստացուած (dérivé) արդիւնաբերական եղերի մասին, որոնք իմ ծրագրից դուրս են: Այսչափ միայն ասեմ զործին բոլորովին անծանօթ ընթերցողի տեղեկութեան համար որ նաւթակիր համարուած դաշտում հոր են փորում, եւ երկաթէ լայն խողովակներ միմիանց կցելով իջեցնում են հորի մէջ մինչեւ նաւթի գտնուած տեղը հասնելը· այդ խորութիւնը երբեմն լինում է հարիւրաւոր մէտր եւ այնուհետեւ նեղ եւ երկար դոյլեր մեքենայի միջոցով վար իջեցնելով քաշում հանում են նաւթը: Այս գործողութիւնը հետզհետէ աւելի կատարելագործուած ձեւ է ստացած: Այսպէս գետնի խորութիւնից լոյս աշխարհ հանուած սեւ նաւթը կամ հում քարիւղը (pétrole brut) փոխադրում են զտելու գործարան, ուր նախ զտում են իր ծանր մասերից եւ պատրաստում են կէրոսին, որ լուսաւորութեան համար է գործածւում եւ բէնզին (essence), որ ինքնաշարժների (automobile) եւ սաւառնակների (avion) համար է: Այս զտումից յետոյ մնացած մասը, որ այդ պատճառով էլ ռուսերէն մնացորդ (остатки) է կոչւում կամ մազուտ, գործածւում է իբրեւ ընտիր վառելիք՝ մեքենաների համար: Այս միւնոյն մազուտը զտելով պատրաստում են զանազան տեսակ մեքենական եղեր:

Ի սկզբան գործարաններում հում նաւ-



[1] Բաքուն՝ հայ պատմագրի Բազաւանն է համարւում, Սասանեանների շրջանի:

© National Library of Armenia